ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 17-31 *Կառավարում*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.017

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԵՎ ԸՍՏ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական բարդ և անորոշության (ինչպես ներքին, այնպես էլ հատկապես արտաքին քաղաքականության ոլորտներում) բարձր աստիճանի պայմաններում խիստ արդիական է դառնում բացահայտել երկրի տնտեսական աճի ապահովման վրա բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման ազդեցությունը (նկատի ունենալով, որ ՀՀ-ում ազգային հարստության ցուցանիշը չի հաշվարկվում)։

Ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև կապը բնութագրելու համար հեղինակները դիտարկել են ՀՆԱ-ի «կապիտալացման» հնարավորությունը և դրա համար անհրաժեշտ ժամանակահատվածը։ Ակնհայտ է, որ որքան կարճ է այդ ժամանակահատվածը, այնքան ավելի արդյունավետ է գործում երկրի տնտեսությունը, և բարձր են նրա վերարտադրողական հնարավորություններն ու սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը։

Հոդվածում ուսումնասիրվել են բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման ժամանակակից միտումներն ու այդ հարաբերությունների վիճակը Հայաստանի Հանրապետությունում։

Բանալի բառեր – *ՀՆԱ, ազգային հարստություն, բնակչության եկամուտներ, եկամուտների բաշխում, համախառն կուտակում, ակտիվներ, ներդրումներ, արտադրված կապիտալ, մարդկային կապիտալ, բնական կապիտալ*

Պետության ինքնիշխանության և անկախության ապահովումը, երկրի բնակչության բարեկեցության աճը և ազգային տնտեսության զարգացումը պայմանավորված են մի շարք գործոններով և նախադրյալներով, որոնք ինչպես ներկայում, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում կանխորոշում են սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական ռազմավարական ուղղությունները։ Որպեսզի ապահովվեն հասարակության բազմակողմանի զարգացումն ու երկրի հզորացումը, անհրաժեշտ է ոչ միայն սպառման բավարար մակարդակ, այլև կուտակման բավարար նորմայի ապահովում, ինչն էլ ընկած է հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության հիմքում։ Եթե չի ապահովվում վերարտադրության այս բնականոն ընթացքը, ապա հասարակությունը զրկվում է հետագա զարգացման երաշխիքներից, ինչն էլ կարող է դառնալ երկրի անվտանգության խարխլման և պետության

տնտեսական քաղաքականության ձախողման պատճառ: Կամ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է ունենալ հեռանկարային զարգացման տեսանկյունից ֆինանսական, նյութատեխնիկական, աշխատանքային որոշակի ռեսուրսներ և բնական պաշարներ, որոնք կարող են ապահովել սոցիալ–տնտեսական հետագա առաջընթացը: Բնակչության կենսամակարդակի պատշաճ ապահովումը (ընթացիկ սպառում) և ազգային տնտեսության զարգացման համար բավարար միջոցների ձևավորումը (կուտակման նորմա) պետք է ծրագրվեն (պլանավորվեն) այնպես, որ հասարակության ընթացիկ սպառումը լավագույնս հարաբերակցվի առաջիկա զարգացման հեռանկարի հետ: Այդ պատճառով էլ այդպիսի հարաբերակցության խելամիտ սահմանումը ստանում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարևոր նշանակություն:

Տնտեսական առաջընթացի և ընդլայնված վերարտադրության վիճակն ու գործընթացը բնութագրվում են մակրոտնտեսական մի շարք ամփոփ ցուցանիշների օգնությամբ: Դրանց շարքում կարևորվում են համախառն ներքին արդյունքի, ազգային եկամտի, համախառն ազգային եկամտի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկը՝ դրանց տարբեր մոդիֆիկացիաներով (փոխակերպումներով):

Սակայն նշված ցուցանիշների հաշվարկման հիմնական թերությունն այն է, որ դրանք, պատկերավոր ասած, բնութագրում են երկրի զարգացման տվյալ պահը՝ առանց ներկայացնելու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններն ու ներուժը: Այս հիմնական բացը չեզոքացնում է ազգային հարստության ցուցանիշը: Ցավոք, որքան էլ տարօրինակ թվա, շուրջ երեք տասնամյակի պատմություն ունեցող ՀՀ վիճակագրական կոմիտեն (նախկինում՝ ՀՀ ԱՎԾ) մինչ օրս չի հաշվարկում այդ ցուցանիշի մեծությունը:

Ներկայումս ընդունված են ազգային հարստության սահմանման և հաշվարկման Համաշխարհային բանկի միասնական մեթոդական ցուցումները: Ազգային հարստությունը[1] Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) անբաժանելի մաս է: ԱՀՀ-ն հիմք է կառավարության, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց կողմից տնտեսական աճը հաշվարկելու համար:

Ազգային եկամուտն ու բարեկեցությունը հիմնվում են երկրի ակտիվների կամ հարստության վրա, որոնց հաշվարկման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ: Ազգային հարստությունը ներառում է հետևյալ չորս բաղկացուցիչները՝ արտադրված կապիտալ, բնական կապիտալ (պաշարներ), մարդկային կապիտալ և զուտ արտաքին ակտիվներ: Ասվածից հետևում է, որ երկրի ազգային հարստության ավելացման հիմնական աղբյուրը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի)

[1] Տե՛ս The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf

աճն է: Վերջինիս՝ որպես երկրի տնտեսական ներուժի (հզորության) գնահատման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի մեծության հաշվարկման եղանակներից մեկը ծախսային մեթոդն է. այն սպառման, ներդրումների, պետական գնումների և զուտ արտահանման հանրագումարն է:

Եվ քանի որ ներդրումների հիմնական աղբյուրը երկրի մասշտաբով համախառն կուտակումն է, այդ պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում օգտագործել այդ ցուցանիշը, որը հիմնական միջոցների համախառն կուտակմանը ավելացրած նյութական շրջանառու միջոցների (պաշարների) փոփոխությունն է:

Ինչպես ցույց է տալիս ՀՆԱ-ի կառուցվածքը ձևավորող հիմնական բաղկացուցիչների շարժը (տե՛ս գծապատկեր 1), 2012-2020 թթ. սպառման բաժինը առանձին տարիների (2012 թ., 2013 թ., 2014 թ.) գերազանցել է ՀՆԱ-ի մեծությունը, իսկ 2015–2020թթ. այն կազմել է ՀՆԱ-ի ավելի քան 90 տոկոսը՝ դրսևորելով աճի միտում: Նման ցուցանիշների պարագայում ակներև է, որ ՀՀ տնտեսությունը ավելի շատ «սպառող», քան «կուտակող» է: Այդ մասին է վկայում նաև նշված ժամանակահատվածում կուտակման նորմայի (համախառն կուտակում/ՀՆԱ, %-ով) ցուցանիշը, որը բերված ժամանակահատվածում՝ 2020-ը 2012-ի համեմատությամբ, նվազել է 8.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 1

ՀՀ-ում սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման հարաբերությունը ՀՆԱ-ին, 2012-2020 թթ.



	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Սպառում/ՀՆԱ, %	101.2	102.4	101.5	91.2	90.8	92.3	91.3	95.9	91.4
Համախառն կուտակում/ՀՆԱ, %	25.3	22.3	20.9	20.7	18.0	18.4	22.4	17.4	17.2
Զուտ արտահանում/ՀՆԱ, %	-24.8	-21.0	-19.9	-12.1	-9.6	-12.9	-10.1	-18.7	-22.8

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով:

Կայուն երկարաժամկետ տնտեսական աճը պահանջում է ներդրումների և պորտֆելային ակտիվների առավել ինտենսիվ ընդգրկում: Թեև ՀՆԱ-ն տնտեսական աճի հաշվարկման կարևոր չափանիշ է, սա-

կայն այն հաշվում է միայն եկամուտն ու արտադրությունը և չի արտացոլում ակտիվների հիմնական բազայում տեղի ունեցող փոփոխությունները: Առանձին դիտարկվող ՀՆԱ-ն կարող է ճշգրտորեն չբնութագրել տնտեսական իրավիճակը: Այն չի արտացոլում բնական կապիտալի սպառումը և ակտիվների մաշվածությունը, չի տալիս հետևյալ հարցերի պատասխանները. ներդրումներն ու հարստության կուտակումը աճում են բնակչության թվի աճի՞ արդյունքում, կամ էլ ակտիվների համամասնությունը համապատասխանո՞ւմ է արդյոք երկրի զարգացման նպատակներին:

Նշվեց, որ ազգային հարստության հաշվարկը հիմնվում է ակտիվների առանձին դասեր կազմող հետևյալ չորս բաղադրիչների վրա.

- շուկայական գներով արտահայտված արտադրված կապիտալ և քաղաքային հողատարածքներ՝ շենքեր, մեքենաներ, սարքավորումներ, բնակելի և ոչ բնակելի քաղաքային հողատարածքներ,
- բնական կապիտալ (պաշարներ)՝ էներգետիկ ռեսուրսներ (նավթ, գազ, քարածուխ) և օգտակար հանածոներ (10 կատեգորիա), գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (արոտավայրեր և ցանովի հողատարածքներ), անտառներ (փայտանյութ և որոշ յուրահատուկ անտառային բարիքներ) և հսկվող (պաշտպանվող) տարածքներ: Բնական կապիտալի (պաշարների) արժեքը հաշվարկվում է վարձակալական վճարի դիսկոնտավորված գումարով, որը ձևավորվում է տվյալ ակտիվի գործածության ողջ ժամկետի ընթացքում,
- մարդկային կապիտալ՝ ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի (զբաղված, ինքնազբաղված) դասակարգված բնակչության՝ աշխատանքի ընթացքում գործադրած ջանքերի, ունակությունների և փորձի արժեքի: Մարդկային կապիտալի արժեքը հաշվարկվում է որպես ողջ կյանքի ընթացքում վաստակած աշխատավարձի դիսկոնտավորված գումար,
- զուտ արտաքին ակտիվներ՝ երկրի արտաքին ակտիվների և պարտավորությունների գումարի (օրինակ՝ օտարերկյա ուղղակի ներդրումներ) տարբերությունը[2]:

Ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման հարաբերությունները, ինչպես նաև այդ ոլորտում ծագող հիմնախնդիրների լուծումներն աշխարհի բոլոր երկրներում (ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող) ընկած են կառավարությունների կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքում: Պատճառն այն է, որ երկրի տնտեսական աճի տեմպերը, դրա որակն ու արդյունավետությունը մեծապես պայմանա-

---

[2] Տե՛ս **Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան,** Ազգային հարստությունը որպես տնտեսության կապիտալացման աստիճանի գնահատման հիմնական ցուցանիշ, «Ի՞նչ անել». Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Գիտագործնական խորհրդաժողով, Եր., 2018 թ., էջ 95-106:

վորված են բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների և հարստության բաշխման համամասնություններով, որոնք էլ հասարակության ներսում սոցիալական համերաշխության և գործընկերության հիմք են: Ավելին, հենց այս նպատակի իրագործմանն էլ պետք նպատակաուղղվեն տնտեսական քաղաքականության գործիքները, որոնք կապահովեն հասարակության ներսում բնակչության տարբեր խմբերի շահերի ներդաշնակությունը և բնականոն զարգացումը:

2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխության թերևս ամենահիմնական պատճառներից մեկը հանրապետությունում բնակչության եկամուտների և ազգային հարստության այնպիսի բաշխումն էր, որը հանգեցրել էր հասարակության բևեռացմանը՝ ստեղծելով հարուստ փոքրամասնություն և մեծ տեսակարար կշիռ ունեցող աղքատներ: Դեռևս Արիստոտելն է նշել, որ եթե ձեր պետության ներսում ունեք փոքրաթիվ հարուստներ և մեծաթիվ աղքատներ, ապա դուք ունեք երկու պետություն՝ հարուստների և աղքատների: Մյուս կողմից էլ, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցածր ցուցանիշը, աշխատանքի ու կապիտալի միջև ՀՆԱ-ի անարդար բաշխումը, բնակչության աղքատության բարձր մակարդակը (2019 թ. սեպտեմբերի դրությամբ՝ 25.7%), ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններ երրորդ հանրապետության անցած ժամանակահատվածում ձևավորել են այնպիսի տնտեսություն, որն աչքի է ընկնում հարստության ստեղծման և կուտակման ցածր արդյունավետությամբ:

Վերը շարադրվածից հետևում է, որ ՀՀ-ում առաջացել է անհրաժեշտություն բարելավելու բնակչության եկամուտների ու ազգային հարստության ձևավորման և բաշխման հարաբերությունները, իսկ այդ ոլորտում իրականացվող տնտեսագիտական ուսումնասիրությունները և վերլուծությունները ձեռք են բերում գիտագործնական կարևորություն:

Հայաստանի Հանրապետությունում անցած տարիներին ձևավորվել է, ըստ էության, անարդար հասարակություն[3], որի հետևանքով

[3] Այդ մասին են վկայում նաև 2019 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքները, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բուհ-երի ներկայացուցիչները «Նշված արժեքներից որո՞նք եք համարում ամենակարևորը» հարցի տարբերակները դասակարգել են առաջին կարևոր դիրքում հետևյալ համամասնությամբ՝ որպես ամենակարևոր արժեք նշած բոլոր մասնակիցների 36%-ն ընտրել է «արդարություն» պատասխանը, 22%-ը՝ «ազատություն»: Մյուս տարբերակները որպես ամենակարևոր արժեք ընտրվել են մասնակիցների 8 և ավելի քիչ տոկոսի կողմից, մասնավորապես՝ «հայրենասիրություն» և «համերաշխություն» տարբերակները հարցվածների 8-ական տոկոսն են համարել ամենակարևոր արժեք, «մարդու նկատմամբ բարությունը», «համախմբվածությունը», «ինքնասահմանափակումը և զոհաբերությունը»՝ հարցվածների 7-ական տոկոսը, իսկ «ընտանեկան ավանդույթները» ամենակարևոր արժեք է համարում հարցվածների 5%-ը (տե՛ս **Ա. Մարկոսյան, Վ. Խաչատուրյան, Է. Մաթևոսյան,** Ժամանակակից պետության տնտեսագիտություն. պետական կարգավորման գործիքակազմը, Եր., 2000, էջ 46-47):

(հիմնականում բաշխման անարդյունավետ կառուցակարգերի պատճառով) նկատվում է բնակչության եկամուտների խիստ բևեռացում, աշխատավարձերի ցածր մակարդակ, հարստության կուտակում փոքրաթիվ մարդկանց (կլանների) ձեռքում, որն էլ հանգեցրել է բնակչության մեծ չափերով արտագաղթի և աղքատության բարձր մակարդակի: Եթե ՀՀ-ում ՀՆԱ-ի ձևավորման և բաշխման, բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների բաշխման վերաբերյալ ունենք վիճակագրական համապատասխան տվյալներ, ապա ՀՀ վիճակագրական կոմիտեն չի հաշվարկում և հրապարակում ազգային հարստության ձևավորման ու բաշխման վերաբերյալ տվյալներ, ինչն էլ դժվարացնում է տնտեսական այդ կարևորագույն կատեգորիայի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը: Այդպիսով, բնակչության եկամուտների և հարստության արդարացի բաշխումը, աշխատանքի ու կապիտալի միջև հակասությունների վերացումը, երկրի ազգային հարստության ձևավորումը և դրա բազմապատկումը ստանում են ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական հնչեղություն: Ուստիև ազգային հարստության ձևավորման և բաշխման հիմնախնդիրը պետք է գտնվի տնտեսագետ–հետազոտողների ուշադրության կենտրոնում և հետապնդի հետևյալ նպատակները.

Նախ՝ անհրաժեշտ է ուսումնասիրել ժամանակակից աշխարհում բնակչության եկամուտների և հարստության աճի միտումները, հատկապես սպառման ու կուտակման համամասնությունների փոփոխման համատեքստում: Այստեղ կարևոր տեղ է հատկացվում տնային տնտեսությունների սպառման ուղղությունների ուսումնասիրությանը, աշխարհի տարբեր երկրներում բնակչության բացարձակ և համեմատական աղքատության պատճառների ու դրանց հետևանքների բացահայտմանը, ինչպես նաև այդ երկրների կառավարությունների կողմից բնակչության եկամուտների և հարստության ձևավորման ու բաշխման արդյունավետ համակարգերի և կառուցակարգերի մշակման, կիրառման ու դրանց արդյունավետության հիմնահարցերին:

Հաջորդ խնդիրը բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման հարաբերությունների ուսումնասիրությունն է ՀՀ-ում, այդ թվում՝ կարևորելով տնային տնտեսությունների կողմից սպառման կառուցվածքի փոփոխությունները և գնահատելով վերջիններիս էությունը: Նշանակալի տեղ պետք է հատկացվի նաև բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրներին ու դրանց փոփոխություններին վերջին տարիների ընթացքում: Հետազոտության կարևոր մաս պետք է դառնան նաև բնակչության խնայողությունների ու դրանց ծավալների ավելացման, ինչպես նաև բնակչության տարբեր շերտերի միջև բաշխման ուսումնասիրությունը, այդպիսի բաշխման իրական պատկերը:

Վերջին տարիների համար կարող ենք նշել, որ ՀՀ-ում տեղի է ունեցել բնակչության եկամուտների բացարձակ աճ, բնակչության մեկ

շնչի հաշվով իրական սպառման միջին տարեկան աճ, ինչպես նաև բնակչության աղքատության նվազում: Պաշտոնական տվյալներով՝ բնակչության դրամական եկամուտների փաստացի բաշխումը 2008-2019 թթ., ըստ քվինտիլային խմբերի, վկայում է, որ 2019թ. 2008թ. համեմատությամբ առաջին (նվազագույն եկամուտներով) քվինտիլային (20%) խմբի բաժինը ընդհանուր եկամուտների մեջ նվազել է 2 տոկոսային կետով՝ 2008 թ. 7%-ից 2019 թ. հասնելով 5%-ի, մինչդեռ 5-րդ (առավելագույն եկամուտներով) քվինտիլային խմբի բաժինն ավելացել է 5 տոկոսային կետով՝ 2008 թ. 38%-ից 2019 թ. հասնելով 43%-ի[4]: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում հարաբերականորեն հարուստներն ավելի են հարստացել, իսկ աղքատներն ավելի են աղքատացել, ինչն էլ հասարակության ներսում սրել է և հեղափոխական իրադրության հասցրել բնակչության տարբեր շերտերի միջև եղած հակասությունները: Ու թեև 2018-2019 թթ. նկատվել է բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբի որոշակի բարելավում (2018-ին 2017–ի համեմատ 0.1 տոկոսային կետով, իսկ 2019-ին՝ 0.6 տոկոսային կետով), սակայն ակնհայտ է, որ ՀՀ–ում 1996-2019 թթ. ժամանակահատվածում դեռևս չի ձևավորվել միջին խավ, որը հասարակության կայունության հիմնական երաշխիքն է, քանի որ 2019 թ. տվյալներով՝ միջին եկամուտներ ունեցող բնակչության խմբի բաժինը կազմել է 24.7%, ինչը ցանկալի մակարդակից (55-60%) էականորեն ցածր է: Ու թեև բնակչության ամենահարուստ խմբի բաժինը 1996-2019 թթ. ժամանակահատվածում նվազել է 17.1 տոոկսային կետով, սակայն այն շարունակում է մնալ բարձր, և այս խմբի հարաբերակցությունը բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբին 2019 թ. կազմել է 4.4 անգամ, իսկ ամենահարուստ (տասներորդ) դեցիլի հարաբերությունը ամենացածր եկամուտ ունեցող (առաջին) դեցիլի եկամուտներին կազմել է 17.4 անգամ, ինչը այդ հարաբերակցության «նորմալ» կամ թույլատրելի չափը (6-8 անգամ) գերազանցում է 2.2-ից 2.9 անգամ (տե՛ս աղյուսակ 1): Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՀ-ում ստվերային տնտեսության չափը տատանվում է 40-50%-ի սահմաններում, ապա այդ տարբերությունները զգալիորեն ավելի բարձր կլինեն, քան պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա հաշվարկվածները:

Հասկանալի է, որ բնակչության եկամուտների նման բաշխումը չի կարող հանրության տարբեր շերտերի միջև սոցիալական համերաշխության մթնոլորտ ստեղծել, եթե չնշենք հակառակը, իսկ դա նշանակում է, որ հանրապետությունում բնակչության տարբեր խմբերի եկամուտների ձևավորումը հիմնավորված չի եղել, և այն հետևանք է ՀՆԱ–ի ոչ արդարացի բաշխման:

---

[4] Հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2020 թ., Եր., ՀՀ ՎԿ, էջ 132–ի, Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2012 թ., Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 104–ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 1

ՀՀ բնակչության եկամուտների բաշխումն ըստ դեցիլային, ինչպես նաև ցածր, միջին և բարձր եկամուտ ունեցող խմբերի, 1996-2019 թթ.

		1996	2001	2005	2010	2015	2016	2017	2018	2019
Ամենաաղքատ	I	0.3	1.5	1.6	2.1	2.0	1.7	1.7	2.0	1.6
	II	1.3	3.0	3.2	3.5	3.6	3.3	3.6	3.5	3.7
	III	2.3	3.4	4.5	4.9	4.9	4.5	4.9	4.8	5.3
Ցածր եկամուտ ունեցողներ (I+II+III+IV/2)		**5.5**	**10.5**	**12.2**	**13.6**	**13.5**	**12.4**	**13.2**	**13.3**	**13.9**
	IV	3.3	5.1	5.8	6.1	6.0	5.8	6.0	5.9	6.5
	V	4.4	5.9	7.2	7.6	7.3	7.1	7.1	7.2	7.6
	VI	5.9	6.5	8.8	8.3	8.2	8.3	8.4	8.5	8.4
Միջին եկամուտ ունեցողներ (IV/2+V+VI+VII/2)		**16.0**	**19.5**	**24.2**	**24.1**	**23.3**	**23.3**	**23.6**	**23.7**	**24.7**
	VII	8.0	9.0	10.5	10.2	9.6	10.0	10.1	10.2	10.9
	VIII	11.3	10.6	13.0	12.3	11.7	13.0	12.5	12.2	12.6
	IX	17.4	15.6	17.0	15.8	14.7	17.5	16.4	15.3	15.6
Ամենահարուստ	X	45.8	39.4	28.4	29.1	32.2	28.8	29.3	30.4	27.8
Բարձր եկամուտ ունեցողներ (VII/2+VIII+IX+X)		**78.5**	**70.0**	**63.6**	**62.3**	**63.2**	**64.3**	**63.2**	**63.0**	**61.4**

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 92–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 92–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 106–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2020, Եր., ՀՀ ՎԿ, էջ 134–ի տվյալներով:

Այս հանգամանքը պայմանավորված է ՀՀ-ում եկամուտների ձևավորման հաշվում վարձու աշխատանքի վարձատրության բաժնի էական նվազմամբ և կապիտալի տերերի եկամուտների ավելացմամբ: Այսպես, 2018 թ. 1990 թ. համեմատությամբ վարձու աշխատանքի վարձատրության բաժինը ՀՆԱ-ում 57.4%-ից հասել է 33.8%-ի, կապիտալի տերերի բաժինը համապատասխանաբար՝ 31.7% և 51.9%: Իսկ պետության բաժինը (արտադրության և ներմուծման հարկերի բաժինը ՀՆԱ–ում) կազմել է համապատասխանաբար՝ 17.8% և 11.8% (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Եկամուտների ձևավորման կառուցվածքը ՀՀ–ում 1990-2018 թթ., %-ով ընդամենի նկատմամբ

Տարիները	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը	Արտադրության և ներմուծման հարկերը	Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-)	Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ	այդ թվում՝		Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)
					հիմնական կապիտալի ապառում	տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ	
1990	57.4	17.8	6.9	31.7	14.9	16.8	100.0
1991	52.5	8.1	1.9	41.3	15.0	26.3	100.0
1992	38.4	9.0	0.6	53.3	16.6	36.6	100.0
1993	41.8	6.0	0.9	53.1	15.1	38.0	100.0
1994	41.5	5.8	1.1	53.9	14.8	39.1	100.0
1995	39.3	5.4	0.4	55.7	14.3	41.4	100.0
1996	39.9	6.7	0.3	53.6	15.0	38.6	100.0
1997	41.8	9.2	0.4	49.3	14.4	34.9	100.0
1998	41.3	10.2	0.1	48.7	13.6	35.0	100.0
1999	42.9	11.8	1.4	46.8	14.1	32.7	100.0
2000	42.7	11.4	0.7	46.6	14.6	32.1	100.0
2001	41.8	11.8	0.6	46.9	14.3	32.6	100.0
2002	39.5	12.0	0.6	49.1	14.9	34.2	100.0
2003	40.3	11.4	0.6	49.0	14.0	35.0	100.0
2004	39.5	10.5	0.6	50.6	13.2	37.4	100.0
2005	39.4	10.7	0.4	50.3	12.7	37.6	100.0
2006	39.0	10.4	0.3	50.9	11.7	39.2	100.0
2007	38.2	11.7	0.3	50.4	11.5	38.8	100.0
2008	37.2	13.0	0.2	50.0	10.5	39.5	100.0
2009	38.4	12.3	0.1	49.4	10.9	38.5	100.0
2010	37.1	12.8	0.1	50.1	11.3	38.9	100.0
2011	36.6	12.4	0.1	51.0	10.7	40.3	100.0
2012	34.5	12.5	0.1	53.1	12.6	40.4	100.0
2013	34.0	12.6	0.1	53.6	12.7	40.9	100.0
2014	33.7	12.8	0.1	53.5	12.7	40.8	100.0
2015	34.4	12.0	0.2	53.7	13.8	39.9	100.0
2016	34.8	11.4	0.2	54.0	13.9	40.1	100.0
2017	34.5	11.6	0.1	53.9	13.5	40.5	100.0
2018	33.8	12.0	0.1	54.3	13.0	41.2	100.0
Ընդա–մենը 1990-2018	**36.6**	**11.8**	**0.2**	**51.9**	**12.8**	**39.2**	**100.0**

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով:

Հարց է առաջանում, կարելի՞ է արդյոք ՀՆԱ–ն ավելի արդարացի բաշխել, որպեսզի որոշակի ներդաշնակություն լինի աշխատանքի, կապիտալի տերերի և պետության եկամուտների միջև: Այդպիսի սոցիալական քաղաքականության իրագործման պատկերը բերված է աղյուսակ 3-ում, որի տվյալները վկայում են, որ ընդամենը 10 տարում (1980-1989թթ.) հաջողվել է իրականացնել եկամուտների բաշխման հավասարակշռված և նպատակային քաղաքականություն:

Աղյուսակ 3

Խորհրդային Հայաստանի բնակչության բաժանումն ըստ մեկ շնչին ընկնող, ինչպես նաև ցածր, միջին և բարձր եկամուտ ունեցող խմբերի ամբողջական եկամտի, 1980-1989 թթ. (ըստ ընտանեկան բյուջեների ինտեգրման տվյալների)

	Բնակչության միջին տարեկան թիվը							
	հազար մարդ				տոկոսով			
	1980	1985	1988	1989	1980	1985	1988	1989
Ամբողջ բնակչությունը, այդ թվում՝ մեկ շնչին ընկնող ամբողջական եկամտով, ամսում, ռուբ.	**3112**	**3349**	**3479**	**3335**	**100**	**100**	**100**	**100**
մինչև 50	450	217	120	80	14.8	6.5	3.4	2.4
50-75	891	699	513	397	28.6	20.9	14.7	11.9
75-100	760	825	746	640	24.4	24.7	21.5	19.2
Ցածր եկամուտ ունեցողներ (մինչև 50-ից - 100)	**2101**	**1741**	**1379**	**1117**	**67.8**	**52.1**	**39.6**	**33.5**
100-125	470	627	695	650	15.1	18.7	20	19.5
125-150	256	416	510	517	8.2	12.4	14.7	15.5
150-175	135	244	344	370	4.4	7.3	9.9	11.1
Միջին եկամուտ ունեցողներ (100-ից - 175)	**861**	**1287**	**1549**	**1537**	**27.7**	**38.4**	**44.6**	**46.1**
175-200	68	139	221	354	2.2	4.1	6.3	7.6
200-250	56	124	211	261	1.8	3.7	6.1	7.8
250-ից ավելի	16	58	119	166	0.5	1.7	3.4	5
Բարձր եկամուտ ունեցողներ (175-ից - 250-ից ավելի)	**140**	**321**	**551**	**781**	**4.5**	**9.5**	**15.8**	**20.4**

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ըստ Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին, վիճակագրական տարեգիրք, Եր., Հայաստան, 1991 թ,, էջ 39: Տեղադրված է ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում, հղումը՝ https://www.armstat.am/file/doc/99507078.pdf

Հեշտ է նկատել, որ բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբի բաժինը 1980 թ. 2101 հազ. մարդուց 1989 թ. կազմել է 1117 հազ. մարդ, և դրա արդյունքում ամբողջական եկամուտների մեջ այս խմբի բաժինը 1980 թ. 67.8%–ից 1989 թ. դարձել է 33.5%, նշված ժամանակահատվածում միջին եկամուտ ունեցողների բաժինը 1980 թ. 27.7%-ից (861 հազ. մարդ) 1989 թ. կազմել է 46.1% (1537 հազ. մարդ)։

Այդպիսով, բնակչության միջին խավը կազմում էր բնակչության մեծամասնությունը։ Ու թեև ավելացել է նաև բնակչության բարձր եկամուտներ ունեցողների ինչպես թվաքանակը, այնպես էլ եկամուտների ընդանուր ծավալում նրանց մասնաբաժինը, սակայն այն կազմել է եկամուտների ընդամենը 20.4%–ը։

Անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել եկամուտների տարբեր խմբերում գտնվող բնակչության եկամուտների հաշվարկման (հաշվառման) գործում տեղ գտած մեթոդաբանական այն մոտեցումները, որոնք կիրառվել են ՀՀ-ում, ինչպես նաև այդպիսի մոտեցումների թերությունները։ Օրինակ՝ առանձին ժամանակահատվածներում տարեկան եկամուտների վերաբերյալ հետազոտությունից բացառվել են բոլոր այն տնային տնտեսությունները, որոնց տրամադրվել է պետական օգնություն, ինչպես նաև որոշակի մակարդակից բարձր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները։ Թեև 2000 թվականների կեսերից ի վեր անցկացված հետազոտություններում դիտավորյալ չի բացառվել որևէ խումբ, այնուամենայնիվ ընտրանքի ձևավորման առնվազն երկու թերություն ակներև են. (1) քաղաքային հետազոտությունները չեն ներառում ինքնազբաղված անձանց (տնային տնտեսությունների) և գործատու տնային տնտեսությունների եկամուտների վերաբերյալ տվյալները, փոխարենը հենվում են ծախսերի մասին տվյալների վրա՝ նպատակ ունենալով հաշվառել դրանց եկամուտները, և (2) գյուղական վայրերի համար իրականացված հետազոտությունները չեն ներառում գյուղական ոչ գյուղատնտեսական տնային տնտեսությունները։ Մեր գնահատմամբ, միասին վերցրած նշված երկու խմբերը կազմում են ՀՀ տնային տնտեսությունների շուրջ 40 տոկոսը, որոնք էլ, ըստ էության, բացառվել են տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի հետազոտություններից։ Հետևաբար, պաշտոնական վիճակագրությունը, որը ցույց է տալիս Ջինիի գործակցի բարելավումը, պետք է դիտարկել և գնահատել որոշակի մոտավորությամբ։

Թեև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բնակչության եկամուտների և ծախսերի հետազոտություններում շտկվել են ընտրանքի ձևավորման մոտեցումները, այնուամենայնիվ բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման արժանահավատությունը շարունակում է մնալ վիճահարույց։ Մասնավորապես, անհրաժեշտ է ցածր եկամուտներ ունեցող խմբերի համար ձևավորել լրացուցիչ ընտրանք՝ ստանալու ավելի ներկայացուցչական տվյալներ։

Դիտարկենք նաև ազգային հարստության ձևավորման և բաշխման հարաբերությունները ՀՀ–ում: Ինչպես նշվեց, ՀՀ վիճակագրական կոմիտեն հանրապետության ազգային հարստության վերաբերյալ տվյալներ չի հաշվարկում և հրապարակում, ինչը կարելի է համարել կոմիտեի աշխատանքներում տեղ գտած լուրջ բացթողումներից մեկը, որը պետք է շտկել առաջիկա 1-2 տարում: Ընդ որում, խոսքը չի վերաբերում մի քանի տվյալների հաշվարկմանը և հրապարակմանը: Ակներև է, որ թեև Համաշխարհային բանկի կողմից ազգային հարստության հաշվարկման ու գնահատման վերաբերյալ առկա են մեթոդաբանական նշանակության լուրջ ուղեցույցներ և հետազոտություններ, սակայն դրանք կարիք ունեն տեղայնացման՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության առանձնահատկությունները: Պետք է նաև հասկանալ, որ երկրի ազգային հարստության ցուցանիշը միայն թիվ չէ, այլ բնութագրում է տվյալ երկրի տնտեսության պատկերը: Այն տնտեսության հետագա զարգացման «ճանապարհային քարտեզը» մշակելու ուղեցույց կարող է լինել, իսկ ազգային հարստության ցուցանիշում, ինչպես հայելիում, արտացոլված են երկրի սոցիալ–տնտեսական զարգացման հիմնական գործոնները, որոնք էլ բնութագրում են երկրի տնտեսական աճի հենասյուները, և որոնք էլ պետք է դառնան տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման միջոցներն ու գործիքակազմը:

Հատկապես կարևոր են դառնում հանրապետությունում տնտեսական գործունեության այն տեսակների զարգացումը և ծավալների ընդլայնումը, որոնք պահանջում են ավելացված արժեքի առավելագույն մեծություն, քանի որ դրա միջոցով է ապահովվում ազգային հարստության մեծության աճը: Բացի այդ, նման եղանակով կարելի է բարելավել տնտեսության կառուցվածքը և ձևավորել արդյունավետ կազմ ունեցող տնտեսական համակարգ, այստեղից բխող զարգացման բոլոր առաջադիմական գերակա ուղղություններով ու դրանց վերաբերյալ մշակված առաջնահերթ միջոցառումներով:

Կարևոր է դառնում նաև ազգային հարստության դերը սոցիալական արդար պետություն ունենալու և բնակչության տարբեր շերտերի միջև սոցիալական համերաշխություն երաշխավորելու գործում, ինչն ապահովվում է ազգային հարստության բաշխման այնպիսի սկզբունքների մշակմամբ ու կիրառմամբ, որոնց պայմաններում հաշվի է առնվում պետության, գործարար շրջանակների և սոցիալական խմբերի շահերի լավագույն զուգակցումը:

Մեր ուսումնասիրության նպատակներից է նաև բնակչության եկամուտների և ազգային հարստության ձևավորման ու բաշխման արդյունավետ համակարգերի և կառուցակարգերի մշակման հիմնական ուղիների բացահայտումը Հայաստանի Հանրապետությունում: Այս առումով կարևոր նշանակություն ունի երկրի հարկային համակարգը, որը ընդհանուր առմամբ արդյունավետ է և ունակ է ապահովելու եկա-

մուտների հավաքագրումը և գոնե ըստ սահմանման՝ ապահովելու որոշակի առաջխաղացում (պրոգրեսիվություն)։ Բնականաբար, հարկային համակարգի առաջնային խնդիրն է եկամուտների հավաքագրումը, այլ ոչ թե դրանց վերաբաշխումը։ Այնուամենայնիվ, այնպիսի բարեփոխումներով, որոնք նախաձեռնվեցին և մասամբ իրականացվեցին նոր հարկային օրենսգրքով, ընտրվեցին եկամուտների հավաքագրման ու բաշխման հորիզոնական և ուղղահայաց հավասարության նպատակները, որոնց մեծ մասը այդուհանդերձ վիճարկելի է։ Անհրաժեշտություն է առաջացել համառոտ անդրադարձ կատարելու և գնահատական տալու ՀՀ-ում գործող տարբեր հարկատեսակներին՝ ավելացված արժեքի հարկին, եկամտային հարկին, շահութահարկին, գույքահարկին, հողի հարկին և այլն։

Այժմ հարկային բարեփոխումների ոլորտում քաղաքականություն մշակողների, իրականացնողների հիմնական մտահոգության տիրույթում է անշարժ գույքի համաչափ հարկումը։ Այդ նպատակով 2019 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը (այն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ից)[5], համաձայն որի՝ անշարժ գույքի հարկման բազա է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը։

ՀՀ-ում հարկային բեռը, որը չափվում է որպես հավաքագրված հարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին, համարվում է միջին ծանրության, իսկ հարկերի ընդհանուր դրույքաչափը (%-ով շահույթի նկատմամբ) կազմում է 18.5%, ինչը տարածաշրջանի երկրներում երկրորդ լավագույն ցուցանիշն է (Վրաստանից հետո՝ 9.9%)[6]։ Հարկային համակարգը, սակայն, բավականին ծանրաբեռնված է անուղղակի հարկերով, և հարկերի հավաքագրումը կախվածության մեջ է դրանցից։ Ինչ վերաբերում է եկամտային հարկին, ապա կախվածությունը այս հարկատեսակից բավականին թույլ է։ Հորիզոնական սանդղակով հարկման արդարությունը ակնհայտորեն չի պահպանվում, քանի որ աշխատավարձ ստացողների վերին դեցիլը, որ նախկինում եկամտային հարկը վճարում էր աճողական սանդղակով, ներկայումս հարկվում է շատ ավելի ցածր տոկոսադրույքով՝ համահարթ սանդղակով։ Այսպես, ամսական մինչև 150 հազ. դրամ ստացողների համար եկամտային հարկի դրույ-

---

[5] Տե՛ս «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի նոյեմբերի 19-ին (ՀՕ–225-Ն)։ Օրենքի լրացումներով տարբերակը տե՛ս Հայաստանի իրավական, տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայքում։

[6] Տե՛ս **Doing Business 2019**. Training for Reforms, Washington, DC: World Bank, էջ 154, 172–ի տվյալները։ Էլեկտրոնային ռեսուրսը՝ https://openknowledge.worldbank.org/handle/ 10986/30438:

քաչափը նախկինում սահմանված էր 23 տոկոս, 150 հազ.-ից մինչև 2 մլն դրամ ներառյալ ստացողների համար՝ 34500 դրամ՝ գումարած 150 հազ. դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը, իսկ 2 մլն և ավելի դրամ ստացողների համար՝ 552500 դրամ՝ գումարած 2 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը[7]: ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածում (հոդված 150) կատարված փոփոխությամբ, որն ուժի մեջ մտավ 2020 թվականին, սահմանվեցին եկամտային հարկի հետևյալ դրույքաչափերը, որոնք կախված չեն ստացվող եկամուտների մեծությունից, 2020 թվականի հունվարի 1-ից կիրառվում է եկամտային հարկի 23 տոկոս դրույքաչափը, 2021 թվականի հունվարի 1-ից՝ 22 տոկոս, 2022 թվականի հունվարի 1-ից կկիրառվի 21 տոկոս դրույքաչափը, իսկ 2023 թվականի հունվարի 1-ից՝ 20 տոկոս[8]:

АШОТ МАРКОСЯН, ЭЛЯНОРА МАТЕВОСЯН – ***Проблемы капитализации национального богатства и распределения населения по величине доходов в Республике Армения*** **–** В сложившихся тяжелых социально-экономических условиях и при наличии высокой степени неопределенности как во внутренней жизни, так и во внешней политике Республики Армения актуальной проблемой становится выявление влияния роста и распределения доходов населения на результаты экономического развития (принимая во внимание также тот факт, что величина национального богатства в Республике Армения не рассчитывается). Как известно, основным способом увеличения доходов населения является рост ВВП страны, поскольку в основе расчета экономического роста лежат объемы доходов и производства. Для описания взаимосвязи между национальным богатством и ВВП авторы рассмотрели возможность «капитализации» ВВП и установили необходимый для этого период. Очевидно, что чем короче данный период, тем эффективнее работает экономика страны, тем выше ее репродуктивный потенциал и потенциал социально-экономического развития.

В статье исследуются современные тенденции формирования и распределения доходов населения и состояние этих отношений в Республике Армения. Один из основных вопросов, находящихся в поле зрения авторов, – возможность более справедливого распределения ВВП, с установлением определенной справедливости распределения доходов между собственниками труда, капитала и доходами государства. Результаты исследования показали, что распределение доходов населения в Армении не способствовало созданию атмосферы социальной солидарности между различными слоями общества, а наоборот, и это означает, что

---

[7] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հոդված 150–ը («Եկամտային հարկի դրույքաչափերը»), ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին (ՀՕ–165-Ն), իսկ տվյալ հոդվածը նշված խմբագրությամբ գործել է մինչև 2020 թվականի հունվարի 1-ը:

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին, ՀՕ-68-Ն:

формирование доходов разных групп населения в Армении было необоснованным и является следствием несправедливого распределения ВВП страны. В контексте вышеизложенного актуальной задачей становится разработка рекомендаций по методологии оценки национального богатства, возможностям ее применения, а также созданию эффективных мер и структур по распределению национального богатства, как и доходов населения.

Ключевые слова: *ВВП, национальное богатство, доходы населения, распределение доходов, валовое накопление, активы, инвестиции, произведенный капитал, человеческий капитал, природный капитал*

ASHOT MARKOSYAN, ELYANORA MATEVOSYAN – *Problems of Capitalization of National Wealth and Distribution of Population by Income Groups in the Republic of Armenia.* – In the current difficult socio-economic conditions and the presence of a high degree of uncertainty, both in the domestic life and the foreign policy of the Republic of Armenia, revealing the influence of the growth and distribution of incomes of the population on the results of economic growth (taking into account also the fact that the value of the national wealth in the Republic of Armenia is not calculated) is becoming actual.

As it is known, the basic income increase of the population is the growth of the country's GDP since the calculation of economic growth is based on the volumes of income and production.

To describe the relationship between national wealth and GDP, the authors considered the possibility of *capitalizing* GDP and established the necessary period for this. It is obvious that the shorter this period, the more efficiently the country’s economy works, the higher its reproductive potential and the potential for socio-economic development.

The article examines the current trends in the formation and distribution of incomes of the population and the state of these relations in the Republic of Armenia. One of the main issues being in the field of vision of the authors was the possibility of a more equitable distribution of GDP so that certain fairness of the distribution of income between the owners of labor, capital, and the state's income was established. The results of the study showed that the distribution of incomes of the population in Armenia did not contribute to the creation of an atmosphere of social solidarity between different strata of society, but on the contrary. This means that the formation of incomes of various groups of the population in Armenia was unjustified and is a consequence of the unfair distribution of the country's GDP.

In connection with the foregoing, the urgent task is to develop recommendations on the methodology for assessing national wealth, the possibilities of its application, as well as the creation of effective, efficient measures and structures for the distribution of national wealth, as well as the income of the population.

Key words: *GDP, national wealth, personal income, income distribution, gross capital formation, assets, investments, produced capital, human capital, natural capital*